

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՄՕՆԹՐԷԱԼԻ ՀԱՅ
ԵԿԵՂԵՑԻՈՅ



PARISH COUNCIL OF
ARMENIAN CHURCH
OF MONTREAL
Park Ave. No. 5242

Մոնթրէալ, 6 Լ Հոկտ. 1960

Բարձրաշնորհ Տէր
Սիոն Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Հիւսիսային Ամերիկայի,
նիւ Եորք.

Սրբազան Հայր,

Ներկայիւս կու դանք տեղեկացնել թէ, Մոնթրէալի Հայստյց. Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ անդամական ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ, Հինգշաբթի 15 Սեպտ. 1960-ին ազատատեղիս շէնքին մէջ, նախագահութեամբ գաղութիս հովիւ Հայր Վազգէն Վրդ. Թաթոյեանի:

Ժողովը միաձայնութեամբ ընտրեց իր ղեկանը,
Ատենապետ. - պրն. Բ. Պըտուքեան
Ատենադպիր - պրն. Զ. Ասլանեան

Միաձայնութեամբ որոշուեցաւ Ծխական Խորհուրդի անդամներուն թիւը 7-էն բարձրացնել 9-ի:

Կարդացուեցաւ նախորդ շրջանի Ծխական Խորհուրդի բարոյական տեղեկատուութիւնը, ինչպէս նաեւ նիւթական հաշուետուութիւնը, որ հաստատուած էր հաշուեքննիչ մարմնի կողմէ: Ժողովը վաւերացուց:

Տեղի ունեցաւ յաջորդ շրջանի ծխական Խորհուրդի 9 անդամներուն ընտրութիւնը, եւ գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան հետեւեալները - Ազգայինները - այբբենական կարգով. -

- Պրնք. Ազգըպրիթեան Սուրէն
- Անդրէասեան Ազատ
- Դշխոյեան Վարդաէս
- Շիրոյեան Խաչիկ
- Պատիկեան Վահան
- Պըտուքեան Քերովբէ
- Սեօթերեան Վարդան
- Սուքեասեան Նուպար
- Քէսթէթեան Յակոբ



Նորընտիր Ծխական Խորհուրդի անդրանիկ նիստը տեղի ունեցաւ
չինգշաբթի 29 Սեպտ. 1960, եւ միաձայնութեամբ կազմուեցաւ
դիւանը հետեւեալ ազգայիններով. -

Ատենապետ. - Քեստեքեան Յակոբ
Ատենադպիր - Սուքիասեան Նուպար
Գանձապահ. - Սեֆթըրեան Վարդան
Փոխ ատենապետ. - Պապիկեան Վահան
Փոխ ատենադպիր. - Դշխոյեան Վարդգէս

Հայցելով Ձեր Սրբութեան Օրհնութիւններն ու վաւերացումը,
Մնամք որդիական անկեղծ զգացումներով,

Մատչելով Սուրբ Աջիդ,

ի դիմաց Ծխական Խորհուրդի

Ատենադպիր

Ատենապետ